ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի գործողության ոլորտը

1. Սույն օրենքը կարգավորում է շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման ոլորտում առաջացող հարաբերությունները, սահմանում է շարժական գույքի գրանցում իրականացնող մարմնի իրավասությունները, շարժական գույքին առնչվող իրավունքների վերաբերյալ գրանցման առանձնահատկությունները և դրանց վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու պայմաններն ու կարգը:

2. Սույն օրենքը չի կարգավորում բանկային հաշիվների, ինչպես նաև դեպոզիտների նկատմամբ իրավունքների գրանցման հետ կապված հարաբերությունները:

3. Սույն օրենքը չի կարգավորում «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված արժեթղթերի գրանցման հետ կապված հարաբերությունները:

4. Սույն օրենքի պահանջները չեն տարածվում պետական, ծառայողական, բանկային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք համարվող տեղեկությունների վրա:

Հոդված 2. Շարժական գույքի նկատմամբ իրավունքների գրանցման մասին օրենսդրությունը

1. Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման ոլորտում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, սույն օրենքով և այլ իրավական ակտերով:

2. Շարժական գույքի նկատմամբ գրավի և այլ իրավունքների պարտադիր գրանցման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են այլ օրենքներով և իրավական ակտերով:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստները.

1) **շարժական գույք՝** անշարժ չհամարվող ցանկացած գույք, ներառյալ՝ կանխիկ դրամական միջոցները, ապագայում ձեռք բերվելիք շարժական գույքը և գույքային իրավունքները, մտավոր սեփականության օբյեկտի նկատմամբ գույքային իրավունքները, շարժական գույքի լիզինգի պայմանագրից ծագող վարձակալության իրավունքները, սեփականության իրավունքի պահպանմամբ առուվաճառքի իրավունքը, շրջանառության մեջ գտնվող ապրանքները, պահանջի իրավունքները, մեկ տարի և ավել ժամկետով կնքված շարժական գույքի վարձակալության իրավունքը, կոմիսիայի առարկա շարժական գույքի նկատմամբ իրավունքները, օդանավերը, հաստոցները, սարքավորումները, գյուղատնտեսական տեխնիկան, գյուղատնտեսական

մթերքները, կենդանիները և թռչունները, ներմուծված, սակայն չմաքսազերծված շարժական գույքը և այլ շարժական գույքը.

2) **գործակալություն (այսուհետ՝ Գործակալություն)՝** շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցում իրականացնող մարմին.

3) **ծանրաբեռնում՝** պայմանագրի կամ օրենքի ուժով ծագած պարտապանի պարտավորության կատարման ապահովման միջոց, որն առաջացնում է շարժական գույքի նկատմամբ պարտատիրոջ գույքային իրավունք.

4) **սահմանափակում՝** դատական ակտերի, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների, քրեական հետապնդում իրականացնող մարմինների, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում այլ պետական մարմինների (այսուհետ՝ սահմանափակում կիրառող իրավասու մարմիններ) որոշումների հիման վրա օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային իրավունքների իրացման սահմանափակում.

5) **գրանցում՝** շարժական գույքի նկատմամբ իրավունքի գրանցում, ներառյալ՝ իրավունքների փոփոխում, դադարեցում.

6) **միասնական գրանցամատյան (այսուհետ՝ Գրանցամատյան)՝** էլեկտրոնային տվյալների համակարգ, որը պարունակում է սույն օրենքով նախատեսված տեղեկությունները շարժական գույքի նկատմամբ իրավունքների վերաբերյալ.

7) **գույքացուցակ՝** պարտապանի՝ սույն օրենքով գրանցման ենթակա մեկից ավելի շարժական գույքի ցանկ.

8) **առաջնային գրանցում՝** շարժական գույքը ծանրաբեռնելու վերաբերյալ Գրանցամատյանում կատարված գրանցում.

9) **շարժական գույքի նույնականացում՝** շարժական գույքի տեսակների դասակարգմանը համապատասխանող թվային և այբբենական ձևով շարժական գույքը համարակալող անփոփոխ համարանիշ.

10) **դիմող անձի ստորագրություն՝** դիմող անձի կողմից դիմումի վրա կատարված էլեկտրոնային ստորագրություն կամ թղթային դիմումի հիման վրա սպասարկման գրասենյակի կողմից կատարված էլեկտրոնային ստորագրություն.

11) **սպասարկման գրասենյակ՝** գրանցում իրականացնելու նպատակով Գործակալության սպասարկման գրասենյակի գործառույթներ իրականացնող նոտար, ինչպես նաև համացանցում հասանելի Գործակալության կողմից ապահովված տիրույթ:

Հոդված 4. Գրանցման նպատակը

Գրանցման նպատակն է տեղեկատվություն հավաքագրելու միջոցով նպաստել՝

1) շարժական գույքի հետ կապված իրավահարաբերություններում անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանվածությանը.

2) շարժական գույքի հետ կապված տեղեկատվության հասանելիությանը.

3) շարժական գույքի նկատմամբ իրավունքների էլեկտրոնային տվյալների միասնական շտեմարանի ստեղծմանը.

4) շարժական գույքի հետ կապված իրավահարաբերությունների մասնակիցների իրավունքների գրանցման և տեղեկատվության պահպանմանը.

5) շարժական գույքի հետ կապված նախապատվության իրավունքի իրացմանը.

6) վիճակագրական տվյալների հավաքագրմանը:

Հոդված 5. Գրանցամատյանում պահվող տեղեկությունների հրապարակայնությունը

1.Գրանցամատյանի տեղեկատվությունը հրապարակային է:

2. Գրանցամատյանի գրանցումներին կարող է ծանոթանալ ցանկացած անձ:

3. Գրանցամատյանի տեղեկատվությունը, ինչպես նաև քաղվածքները տրամադրվում են սույն օրենքով նախատեսված կարգով:

Հոդված 6. Գրանցամատյանի էլեկտրոնային վարումը և տեղեկությունների տրամադրումը

1. Գրանցամատյանը վարվում է Գործակալության կողմից էլեկտրոնային եղանակով: Գործակալության կողմից գրանցման գործընթացներն իրականացվում են էլեկտրոնային եղանակով:

2. Գործակալության գործառույթների իրականացման արդյունքում կայացվող ակտերը, Գրանցամատյանի քաղվածքները տրամադրվում են էլեկտրոնային եղանակով:

3. Գրանցամատյանի տեղեկատվությունը թղթային կրիչի վրա տրամադրվում է անձի դիմումի հիման վրա՝ սույն օրենքով սահմանված կարգով:

Հոդված 7. Գրանցման համակարգի միասնականության սկզբունքը

Հայաստանի Հանրապետությունում գործում է շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքի գրանցման միասնական համակարգ՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Յուրաքանչյուր ոք իրավունք ունի սույն օրենքով սահմանված կարգով, գրանցում իրականացնելու նպատակով սպասարկման գրասենյակի միջոցով դիմել Գործակալությանը:

Հոդված 8. Գրանցամատյանի տվյալների արդիականացման և փոխօգնության սկզբունքը

1. Եթե Հայաստանի Հանրապետության կողմից էլեկտրոնային կարգով վարվող և պահվող տվյալները ենթակա են գրառման նաև Գրանցամատյանում, ապա այդ տվյալները փոփոխվելու դեպքում համապատասխան տեղեկատվությունը ինքնաշխատ կերպով արդիականանում է նաև Գրանցամատյանում:

2. Ինքնաշխատ կերպով արդիականացման ենթակա տվյալների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 9. Պետական տուրքը և Գործակալության կողմից հավելյալ ծառայությունների վճարովիությունը

1. Սույն օրենքով նախատեսված գրանցման և այլ ծառայությունների համար գանձվում է պետական տուրք «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված չափով և կարգով:

2. Լրացուցիչ մատուցվող ծառայությունների տեսակները և ծառայությունների վճարների չափը սահմանում է ՀՀ կառավարությունը:

ԳԼՈՒԽ 2

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Հոդված 10. Գործակալության գործառույթները գրանցման կազմակերպման գործում

1. Գործակալությունը՝

1) կազմակերպում և իրականացնում է շարժական գույքի նկատմամբ իրավունքների գրանցումը,

2) իրականացնում է Գրանցամատյանի վարումը՝ հավաքագրում, մշակում, տրամադրում, դասակարգում և արխիվացնում է շարժական գույքի նկատմամբ իրավունքների գրանցման վերաբերյալ տեղեկատվությունը.

3) ապահովում է շարժական գույքի նույնականացումը.

4) սահմանված կարգով տրամադրում է տեղեկություններ Գրանցամատյանից.

5) ապահովում է իր գործունեությանն առնչվող օրենքներին և իրավական այլ ակտերին ծանոթանալու հրապարակայնությունը,

6) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված և իր գործունեության նպատակներից բխող այլ գործառույթներ:

2. Գործակալությունը չի կրում պատասխանատվություն Գործակալություն ներկայացված փաստաթղթերում ներառված տվյալների հավաստիության համար:

3. Սպասարկման գրասենյակների գործառույթներն իրականացնող նոտարն իր գործունեությունն իրականացնում է Գործակալության հետ կնքված պայմանագրի հիման վրա: Պայմանագրի օրինակելի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 11. Հայաստանի Հանրապետության լիազոր մարմնի գործառույթները

Հայաստանի Հանրապետության լիազոր մարմնի ղեկավարը.

1) հաստատում է Գրանցամատյանի տեղեկություններից օգտվելու կարգը, ներառյալ՝ տրամադրվող քաղվածքների ձևերը.

2) հաստատում է Գրանցամատյանում լրացվող պարտադիր տեղեկությունների ցանկը.

3) վերահսկում է գրանցման գործընթացը.

4) սահմանում է Գործակալության կողմից արխիվային գործերի վարման և պահպանության կարգը:

ԳԼՈՒԽ 3
ԳՐԱՆՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 12. Գործակալություն փաստաթղթեր ներկայացնելը

1. Գործակալություն են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը.

1) դիմում գրանցում կատարելու վերաբերյալ, որը պետք է բովանդակի՝

ա. դիմողի անունը, ազգանունը (իրավաբանական անձի դեպքում՝ լրիվ անվանումը) .

բ. դիմող ֆիզիկական անձի անձնագրի կամ նույնականացման քարտի տվյալները, հանրային ծառայության համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը, բնակության կամ հաշվառման հասցեն, իրավաբանական անձի գրանցման համարը և գտնվելու վայրը.

գ. նշում, որ դիմումը ներկայացվում է Գործակալություն.

դ. նշում գրանցվող իրավունքի մասին.

ե. շարժական գույքի նկարագիրը, իսկ որոշիչ հատկանիշներ պահանջվելու դեպքում՝ նաև լուսանկարները.

զ. գույքացուցակը.

է. դիմումին կցվող փաստաթղթերի ցանկը.

ը. դիմումը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը.

թ. դիմող անձի ստորագրությունը.

ժ. ապահովված իրավունքի առարկայի նկարագիրը, պայմանները՝ գումարի չափը, ժամկետները, իսկ կողմերի համաձայնությամբ նաև կողմերի իրավունքները և պարտականությունները:

2) օրենքով սահմանված կարգով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը,

3) կողմերի ցանկության դեպքում կարող է ներկայացվել նաև պայմանագիրը և այլ փաստաթղթերը.

4) եթե սույն օրենքով նախատեսված դեպքերում գրանցում կատարելու համար Գործակալություն է դիմում լիազորված անձը, ապա ներկայացվում է նաև օրենքով նախատեսված կարգով կազմված լիազորագիր, իսկ օրինական ներկայացուցիչ լինելու դեպքում՝ օրինական ներկայացուցիչ լինելը հաստատող փաստաթղթերը:

2. Այն դեպքերում, երբ հնարավոր է որոշիչ ճշգրիտ տվյալների միջոցով որոշակիացնել շարժական գույքը, ապա դիմողը պարտավոր է նշել այդ որոշիչ հատկանիշները՝ պայմանագրին համապատասխան:

Հոդված 13. Գործակալություն դիմելու կարգը

1. Դիմում ներկայացնելու պահանջը համարվում է պատշաճ կատարված այն դեպքում, երբ անձը.

1) գրանցման էլեկտրոնային դիմումը լրացնում է պարտադիր վավերապայմանները նշելու, անհրաժեշտ փաստաթղթերը կցելու և դիմող անձի կողմից դիմումի և կից փաստաթղթերի վրա էլեկտրոնային ստորագրություն դնելու միջոցով, կամ

2) նոտարական սպասարկման գրասենյակ է ներկայացնում դիմում լրացնելու համար օրենքով սահմանված անհրաժեշտ տեղեկատվություն կամ այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթեր և ստորագրում է նոտարական սպասարկման գրասենյակին հասցեագրած դիմումը:

2. Գրանցման նպատակով պարտապանի նույնականացումը համարվում է պատշաճ կատարված, եթե՝

1) պարտապանը ֆիզիկական անձ է, և այդպիսի դիմումը պարունակում է, պարտապանի անձը հաստատող փաստաթղթի տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը և պարտապանի անունը.

2) պարտապանը Հայաստանի Հանրապետության քաղաքացի չէ, այդպիսի դիմումը պարունակում է անձնագրում նշված նրա անունը, անձնագիրը տվող երկրի անվանումը և անձնագրի համարը.

3) պարտապանը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծված և գրանցված իրավաբանական անձ է, ապա այդպիսի դիմումը պարունակում է պարտապանի անվանումը և պետական գրանցման վկայականի համարը.

4) պարտապանը օտարերկրյա իրավաբանական անձ է, որը իրավասու է Հայաստանի Հանրապետությունում իրականացնել գործունեություն, այդպիսի դիմումը ներառում է Հայաստանում գործելու համար գործող օրենքի համաձայն տվյալ իրավաբանական անձի անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը (առկայության դեպքում):

3. Պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ ներկայացնելու պարտականությունը համարվում է պատշաճ կատարված, երբ դիմողը՝

1) ներկայացնում է բանկի կամ վճարահաշվարկային կազմակերպության կողմից տված անդորրագրի հաստատված վճարման հանձնարարականի բնօրինակը, կամ

2) ներկայացնում է համապատասխան գանձապետական հաշվին փոխանցումը հավաստող համապատասխան ծածկագիրը՝ տրամադրված վճարահաշվարկային կազմակերպության կողմից, կամ

3) կատարում է վճարում վճարային քարտի կամ վիրտուալ վճարային քարտի տվյալները տեղեկատվական համակարգ մուտքագրելու միջոցով:

Հոդված 14. Գործակալության կողմից գրանցումը մերժելը

Սույն օրենքով նախատեսված հիմքերով և կարգով ներկայացված դիմումը ինքնաշխատ համակարգի միջոցով մերժվում է, եթե դիմումը չի բավարարում սույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված պահանջներին:

Հոդված 15. Գրանցում

1. Գործակալությունը պարտավոր է իրականացնել գրանցումը, եթե դիմումը բավարարում է սույն օրենքով սահմանված պահանջներին:

2. Գրանցումը կարող է իրականացվել նախքան ապահովված իրավունքի ծագումը կամ դրանից հետո: Գրանցման ավելի վաղ ներկայացված գույքի նկատմամբ իրավունքներն ունեն նախապատվություն ավելի ուշ ներկայացված իրավունքների նկատմամբ:

3. Յուրաքանչյուր գրանցման դեպքում Գործակալությունը իրականացնում է հետևյալ գործողությունները.

1) իրականացնում է շարժական գույքի նույնականացում,

2) ստեղծում է գրառում, որը պարունակում է չկրկնվող նույնականացման համարը և գրանցման ամսաթիվը և ժամը,

3) ապահովում է գրանցման հասանելիությունը:

4. Գործակալությունը դիմող անձին տրամադրում է գրանցման էլեկտրոնային գրառման օրինակը՝ ներառյալ՝ գրանցման համարը, գրանցման ամսաթիվը և ժամը:

5. Գրանցումն ուժի մեջ է մտնում Գրանցամատյանում գրառում կատարելու պահից:

Հոդված 16. Գրանցամատյանի վարումը

1.Առաջնային գրառումը գրանցվում և դասակարգվում է Գրանցամատյանում՝ ըստ ապահովված իրավունքի առարկայի նույնականացման համարի:

2. Առաջնային գրանցումը և դրան առնչվող բոլոր գրանցումները Գրանցամատյանում դասակարգվում են դրանց միջև կապն ապահովելու միջոցով:

Հոդված 17. Սահմանափակման և ապահովված անձի կողմից գրանցման իրավասությունը

1. Ապահովված անձի կողմից գրանցումը կարող է իրականացվել միայն պարտապանի գրավոր համաձայնության առկայության կամ գրավոր պայմանագրով նախատեսված դեպքերում: Գրանցում իրականացնելու համաձայնությունը կամ համապատասխան դրույթ պարունակող պայմանագիրը ստորագրելով՝ պարտապանը տալիս է դիմումի մեջ ներառված տեղեկությունները հրապարակելու վերաբերյալ համաձայնություն:

2. Սահմանափակման վերաբերյալ գրանցումը կարող է իրականացվել առանց պարտապանի համաձայնության, սահմանափակում կիրառող իրավասու մարմինների կամ ապահովված անձի կողմից՝ շարժական գույքի նկատմամբ ապահովում կիրառելու կամ գույքի նկատմամբ բռնագանձում տարածելու դեպքերում:

Հոդված 18. Գրանցման բովանդակությունը

1. Գրանցումը պարունակում է հետևյալ տեղեկությունները՝

1) գրանցման տևողությունը.

2) ֆիզիկական անձ պարտապանի նույնականացման (անձը հաստատող փաստաթղթի, հանրային ծառայության համարանիշ կամ հանրային

ծառայության համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքը) տվյալները, անվանումը, հաշվառման վայրը.

3) իրավաբանական անձ պարտապանի անվանումը, գրանցման համարը, գտնվելու վայրը.

4) ապահովված անձի նույնականացման (անձը հաստատող փաստաթղթի, հանրային ծառայության համարանիշ կամ հանրային ծառայության համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքը) տվյալները, անվանումը, բնակության կամ գտնվելու վայրը.

5) շարժական գույքի նկարագիրը, այդ թվում՝ որոշիչ հատկանիշները, նույնականացման համարը:

2. Գրանցման մեջ կարող է ներառվել մեկից ավելի պարտապանի և մեկից ավելի ապահովված անձի անուն:

3.Գրանցումը կարող է վերաբերվել մեկից ավելի ծանրաբեռնվածությունների կամ մեկից ավելի պայմանագրերի:

Հոդված 19. Գրանցման տևողությունը և ժամկետի ավարտի հետևանքները

1. Գրանցամատյանում գրանցումը ուժի մեջ է դրա մեջ նշված ժամանակահատվածում: Գրանցումն ուժը կորցնում է դրանում նշված ժամանակահատվածի ավարտին, եթե մինչև այդպիսի գրանցման ժամկետի ավարտը չի ներկայացվում դրա ժամկետը երկարաձգելու մասին դիմում:

2. Ապահովման իրավունքի առարկա շարժական գույքի վաճառքի, փոխանակման, այլ ձևով օտարման կամ վարձակալության դեպքում ապահովված իրավունքի վերաբերյալ գրանցումը շարունակում է ուժի մեջ մնալ օտարումից հետո՝ անկախ ապահովված անձի՝ նման օտարմանը տեղյակ լինելու կամ համաձայնություն տալու հանգամանքից:

3. Գրանցման ժամկետը լրանալու դեպքում ապահովված իրավունքը չի համարվում այն անձի նկատմամբ ձևակերպված, ով ապահովված իրավունքի առարկան, այդ ժամկետի լրանալուց առաջ կամ հետո, ձեռք է բերել հատուցման դիմաց:

Հոդված 20. Փոփոխությունների գրանցումը և դրա ուժի մեջ մտնելը

1. Գրանցումը կարող է փոփոխվել մեկ կամ ավելի փոփոխություններով:

2. Գրանցման փոփոխությունը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

1) գրանցման համարը.

2) գրանցման մեջ առկա ապահովված անձի անունը կամ նույնականացման համարը.

3) սույն օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված տեղեկությունները:

3. Եթե գրանցման փոփոխությամբ ավելացվում է ապահովված իրավունքի նոր առարկա կամ պարտապան, ապա այդ փոփոխությունը պետք է հիմնված լինի ապահովման պայմանագրի կամ այլ գրավոր պայմանագրի վրա:

4.Գրանցման մեջ մեկից ավելի ապահովված անձի մասին գրանցում կատարված լինելու դեպքում՝ փոփոխությունը գործում է միայն համաձայնություն տված պարտատիրոջ նկատմամբ:

5.Գրանցման փոփոխությունը ուժի մեջ է մտնում գրանցելու պահից:

6. Գրանցման փոփոխությունը իրավական ուժ չունի, եթե բացակայում են ապահովված անձի տվյալները:

7.Փոփոխության գրանցմամբ գրանցման վավերականության ժամկետը չի երկարաձգվում, եթե ժամկետի երկարաձգման վերաբերյալ հատուկ այդ մասին նշված չէ:

8. Այլ գրավոր համաձայնության բացակայության դեպքում, պարտապանի կողմից ապահովված իրավունքի առարկա հանդիսացող շրջանառության մեջ

գտնվող գույքն օտարելու ժամանակ գրանցված ապահովված իրավունքը տարածվում է այդ առարկայի օտարումից ստացված միջոցների նկատմամբ, որի համար լրացուցիչ գրանցում չի պահանջվում:

9. Գրանցման եղանակով նախապատվության իրավունք ձեռք բերած անձի կողմից ապահովված իրավունքը զիջելու դեպքում, այն ձեռք բերած անձի համար նախապատվության իրավունքը շարունակվում է և լրացուցիչ գրանցում չի պահանջվում:

Հոդված 21. Ժամկետը երկարաձգելու դիմում

1. Գրանցման ժամկետը կարող է երկարաձգվել միայն դիմումի ներկայացմամբ, որում նշվում է՝

1) առաջնային գրանցման համարը և գույքի նույնականացման համարը.

2) գրանցման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ պարտապանի գրավոր համաձայնությունը, որն ենթակա է նոտարական վավերացման:

2.Ժամկետը երկարաձգելու մասին դիմումը կարող է ներկայացվել գրանցման ուժի մեջ լինելու ժամանակահատվածում:

3. ժամկետը երկարաձգելու մասին դիմում ներկայացնելու դեպքում գրանցումը շարունակում է մնալ ուժի մեջ մինչև դիմումում նշված ժամանակահատվածը կամ այլ հիմքերով դադարումը:

Հոդված 22. Առարկության գրանցում

1. Պարտապանը կարող է ներկայացնել իր նկատմամբ գրանցված ապահովված իրավունքի դեմ առարկելու մասին դիմում, եթե գրանցումը հիմնված չէ փաստերի վրա կամ սխալ է գրանցված: Ապահովված իրավունքի դեմ առարկելու մասին դիմումում նշվում են՝

1) շարժական գույքի նույնականացման համարը.

2) գրանցման ոչ ճիշտ լինելու վերաբերյալ հիմնավորումները:

2. Ապահովված իրավունքի դեմ առարկելու մասին դիմումին կցվում է պահանջը հիմնավորող փաստաթուղթը:

3. Ապահովված իրավունքի դեմ առարկելու մասին դիմումի հիման վրա Գործակալությունը գրանցում է առարկությունը: Ապահովված իրավունքի դեմ առարկելու մասին դիմումի գրանցումն իրականացվում է այնպես, որ ապահովվի ապահովված իրավունքի գրանցման հետ համատեղ առարկության հասանելիությունը:

Հոդված 23. Գրանցումը դադարեցնելը

1. Գրանցման գործողության ժամկետը դադարեցվում է դիմումի հիման վրա, որում նշվում է գրանցման համարը և շարժական գույքի նույնականացման համարը: Դիմումը պարտապանի կողմից ներկայացնելու դեպքում դիմումին կցվում է ապահովված անձի գրավոր համաձայնությունը, որում նշվում է ապահովված իրավունքի առարկայի նկատմամբ իր իրավունքների ծավալը:

2. Գրանցման գործողության ժամկետը դադարեցնելու մասին պարտապանը կարող է գրավոր դիմել ապահովված անձին: Պարտապանի դիմումը ստանալու պահից հինգ օրվա ընթացքում ապահովված անձը պարտավոր է գրանցումը դադարեցնելու մասին դիմում ներկայացնել Գործակալություն, եթե՝ պարտավորությունը կատարված է:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում ապահովված անձի կողմից համաձայնություն չտալու կամ իր առարկությունը պարտապանին և Գործակալություն չներկայացնելու դեպքում պարտապանն իրավունք ունի դիմել Գործակալություն՝ առանց ապահովված անձի համաձայնության գրանցումը դադարեցնելու մասին պահանջով:

4. Առանց ապահովված անձի համաձայնության գրանցումը դադարեցնելու մասին պահանջով դիմումին կցվում է պարտավորությունը կատարված լինելու մասին ապացույց:

5. Գործակալությունը մերժում է առանց ապահովված անձի համաձայնության գրանցումը դադարեցնելու մասին պահանջով դիմումը, եթե ներկայացված ապացույցը բավարար չէ պարտավորությունը կատարված համարելու համար կամ ներկայացված ապացույցները վիճելի են:

ԳԼՈՒԽ 4

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 24. Անցումային և եզրափակիչ դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հուլիսի 1-ին:

2. Մինչև օրենքի ուժի մեջ մտնելը շարժական գույքի նկատմամբ իրավունքների գրանցումները պահպանում են իրենց իրավաբանական ուժը և ենթակա չեն վերագրանցման:

3. Սույն օրենքով նախատեսված Գործակալությունը ստեղծվում է մինչև 2015 թվականի փետրվարի 1-ը:

4. Մինչև 2015 թվականի մայիսի 1-ը ստեղծվում է սույն օրենքով նախատեսված էլեկտրոնային կառավարման համակարգը:

5. Մինչև 2015 թվականի հուլիսի 1-ը շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների վերաբերյալ կատարված գրանցումների վերաբերյալ տեղեկությունները էլեկտրոնային եղանակով փոխանցվում են Գործակալությանը՝ ապահովելով համակարգի տվյալների թարմացումը ինքնաշխատ կարգով:

6. Մինչև 2015 թվականի հուլիսի 1-ը լիազորված մարմինը իրականացնում է էլեկտրոնային կառավարման համակարգի փորձարկումը և նոտարների վերապատրաստումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել հետևյալ բովանդակությամբ 14.1-ին գլխով.

«Գ Լ Ո Ւ Խ 14.1. Ա Պ Ա Հ Ո Վ Վ Ա Ծ Ի Ր Ա Վ Ո Ւ Ն Ք

Հոդված 225.1. Ապահովված իրավունքի հասկացությունը և առարկան

1. Ապահովված իրավունքը օրենքի կամ պայմանագրի ուժով ի ապահովումն պարտավորության կատարման գույքի կամ գույքային իրավունքի նկատմամբ պարտատիրոջ գույքային իրավունքն է:

2. Անշարժ գույքի գրավի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքի 15-րդ գլխով:

3. Ապահովված իրավունքի առարկան կարող է լինել ցանկացած գույք, այդ թվում՝ գույքային իրավունք, բացառությամբ շրջանառությունից հանված գույքի, պարտատիրոջ անձի հետ անխզելիորեն կապված պահանջների՝ ներառյալ ալիմենտի, կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման պահանջների, պետական (գանձապետական) անվանական այն արժեթղթերի, որոնց թողարկման պայմաններով կնախատեսվեն, որ այդ արժեթղթերը գրավադրման ենթակա չեն, և այն իրավունքների, որոնց զիջելն այլ անձի արգելված է օրենքով:

4. Ապահովված անձը գույքն իրավունքով ծանրաբեռնելու իրավունք ունեցող անձն է:

5. Ապահովված իրավունքը տարածվում է նաև այն գույքի վրա, որն ուղղակի կամ անուղղակի առաջանում է ապահովված իրավունքի առարկայի տիրապետումից կամ տնօրինումից, ինչպես նաև ապահովված իրավունքի առարկայի ապահովագրական փոխհատուցումից:

6. Ապահովված իրավունքը ծագում և գործում է պարտավորության ծագման պահից մինչև պարտավորության պատշաճ կատարումը:

7. Ապահովման պայմանագրով ապահովված իրավունքի առարկայի նկարագրությունը լինում է ընդհանուր կամ որոշակի: Այն դեպքում, երբ ապահովված իրավունքի առարկան հնարավոր է որոշել որոշիչ կամ նկարագրական հատկանիշներով, ապա ապահովված իրավունքի առարկայի որոշակի նկարագրությունը պարտադիր է:

8. Ապահովված իրավունքի առարկայի վրա առանց դատարան դիմելու բռնագանձումը իրականացվում է սույն օրենսգրքի 249-րդ հոդվածով սահմանված կարգով, եթե՝

1) դա նախատեսված է պայմանագրով, կամ

2) առկա է ապահովված անձի և պարտապանի միջև կնքված գրավոր համաձայնություն, իսկ եթե պայմանագիր կնքելու համար պահանջվել է երրորդ անձի համաձայնություն կամ թույլտվություն, ապա նաև վերջինիս գրավոր համաձայնությունը՝ առանց դատարանի վճռի գրավ դրված գույքի իրացման մասին:

9. Ապահովված իրավունքի առարկայի վրա դատական կարգով բռնագանձումն իրականացվում է սույն օրենսգրքի 249[1]-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:

Հոդված 225.2. Ապահովված իրավունքների նախապատվությունը

1. Ապահովված իրավունքի առարկայի արժեքից բավարարում ստանալու նախապատվության իրավունքը որոշվում է շարժական գույքի միասնական

գրանցամատյանում գրանցված ապահովված իրավունքի գրանցման առաջնահերթությամբ, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով կամ ապահովված պարտատերերի միջև կնքված պայմանագրով:

2. Ապահովված իրավունքի գրանցումը առաջացնում է նախապատվության իրավունք նույն շարժական գույքի նկատմամբ չգրանցված ապահովված իրավունքի նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով կամ ապահովված պարտատերերի միջև կնքված պայմանագրով:

3. Ապագայում ձեռք բերվող շարժական գույքի կամ ապահովված իրավունքի առարկա շարժական գույքի նկարագիրը ընդհանուր լինելու դեպքերում շարժական գույքի նկատմամբ նախապատվության իրավունք ունի այն անձը ում ֆինանսավորմամբ ձեռք է բերվում շարժական գույքը:

4. Այլ գրավոր համաձայնության բացակայության դեպքում, պարտապանի կողմից ապահովված իրավունքի առարկա հանդիսացող շրջանառության մեջ գտնվող գույքն օտարելու ժամանակ գրանցված ապահովված իրավունքը տարածվում է այդ առարկայի օտարումից ստացված միջոցների նկատմամբ:

5. Գրանցման եղանակով նախապատվության իրավունք ձեռք բերած անձի կողմից ապահովված իրավունքը զիջելու դեպքում, այն ձեռք բերած անձի համար նախապատվության իրավունքը շարունակվում է:

Հոդված 2. Օրենսգրքի 226-րդ հոդվածի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Անշարժ գույքի գրավով ապահովված պարտավորության պարտատերը (գրավառուն) պարտապանի կողմից այդ պարտավորությունը չկատարելու դեպքում գույքի տիրոջ (գրավատուի) մյուս պարտատերերի հանդեպ գրավ դրված գույքի արժեքից բավարարում ստանալու նախապատվության իրավունք ունի: Անշարժ գույքի գրավի պայմանագրից ծագող իրավունքը լիազորված մարմնի կողմից վարվող գրավի գրանցման մատյանում առավել վաղ գրանցած

գրավառուն, մյուս՝ անշարժ գույքի գրավի պայմանագրերից ծագող իրենց իրավունքներն առավել ուշ գրանցած հանդեպ գրավ դրված գույքի արժեքից բավարարում ստանալու նախապատվության իրավունք ունի:»:

Հոդված 3. Օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Գրավ դրված անշարժ գույքի իրացումից ստացված գումարից կամ գրավառուին կամ նրա նշած անձին ի սեփականություն անցած անշարժ գույքի արժեքից այդ գույքի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու համար ծախսերը վճարելու համար անհրաժեշտ գումարներ պահելուց հետո բավարարվում են գրավառուի՝ գրավով ապահովված պահանջները, իսկ մնացած գումարը տրվում է գրավատուին: Գրավառուի՝ անշարժ գույքի գրավով չապահովված պահանջները սույն կետով նախատեսված գումարից (արժեքից) բավարարվում են սույն օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված ընդհանուր կարգով:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հուլիսի 1-ին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել 185.1-ին հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«ՀՈԴՎԱԾ 185.1. Ապահովված իրավունքի առարկան դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը կամ վատնելը կամ թաքցնելը»

1. Ապահովված իրավունքի առարկան պարտապանի կողմից դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը կամ վատնելը կամ թաքցնելը, որը պարտատիրոջը խոշոր չափերի վնաս է պատճառել ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի առաջին մասում նշված գործողությունները, որոնք առանձնապես խոշոր չափերի վնաս են պատճառել՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հուլիսի 1-ին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի ապրիլի 3-ի ՀՕ-169 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածը լրացնել 5-րդ մասով հետևյալ բովանդակությամբ ՝

«5. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասնակիցների բաժնեմասերի նկատմամբ գրավի իրավունքի գրանցումը իրականացվում է «Շարժական գույքի նկատմամբ իրավունքների գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 2. Օրենքի 40-րդ հոդվածի 7-րդ մասը և 41-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում 2015 թվականի հուլիսի 1-ին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-221 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 43-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը ներառում է գույքի վրա արգելանք դնելը, սահմանափակում կիրառելը, այն առգրավելը և հարկադիր իրացնելը (աճուրդ կամ ուղղակի վաճառք): Սահմանափակումը կիրառվում է պարտապանի շարժական գույքի նկատմամբ:»:

Հոդված 2. Օրենքը լրացնել 44.2-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ.

«**Հոդված 44.2. Պարտապանի գույքի վրա սահմանափակում կիրառելը**

1. Պարտապանի գույքի նկատմամբ սահմանափակում կիրառելը ներառում է պարտապանի շարժական գույքի գույքագրումը, և «Շարժական գույքի նկատմամբ իրավունքների գրանցման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով միասնական գրանցամատյանում դրա նկատմամբ սահմանափակման գրանցումը:

Հարկադիր կատարողի կողմից գույքագրման ենթակա չէ պարտապանին պատկանող՝ սույն օրենքի 51-րդ հոդվածով նախատեսված գույքը:

2. Սահմանափակումը կիրառվում է՝

1) դատարանի որոշման հիման վրա,

2) պատասխանողին պատկանող գույքի վրա սահմանափակում կիրառելու մասին վարչական մարմնի որոշման հիման վրա,

3) հանրային իրավական դրամական պահանջները կատարելու ժամանակ:

3. Պարտապանի գույքի վրա սահմանափակում կիրառելու մասին հարկադիր կատարողը կայացնում է որոշում:

4. Սահմանափակում կիրառված գույքի արժեքից բավարարման հերթականությունը և առաջնահերթությունները որոշվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 14.1-ին գլխով սահմանված կարգով:

5. Գույքագրման աշխատանքների ժամանակի և վայրի մասին հարկադիր կատարողը գույքագրման անցկացման օրվանից առնվազն երեք օր առաջ գրավոր տեղեկացնում է պահանջատիրոջը: Պահանջատիրոջ չներկայանալն արգելք չէ գույքագրման աշխատանքներն իրականացնելու համար:

6. Օրենքի հիման վրա ստեղծված և ֆոնդի կառավարչին սեփականության իրավունքով պատկանող ֆոնդի միջոցների վրա սահմանափակում կարող է կիրառվել ֆոնդի կառավարչի միայն այն պարտավորությունների համար, որոնք ծագել են ֆոնդի կառավարման հետ կապված գործողություններից և սահմանված են այդ օրենքով:»:

Հոդված 3. Օրենքի 50-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 50. Գրավ դրված անշարժ գույքի վրա բռնագանձում տարածելը**

1. Պարտապանի գույքի գրավով չապահովված պահանջները բավարարելու համար պարտապանի գրավ դրված անշարժ գույքի վրա բռնագանձում կարող է տարածվել միայն պարտապանի այլ գույքի բացակայության դեպքում:

Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված դեպքերում հարկադիր կատարողը ծանուցում է գրավառուին դատարանի վճռի, կատարողական թերթի, գրավադրված անշարժ գույքի վրա արգելանք դնելու որոշման և գրավատուի չմարված պարտավորությունների չափի մասին:

Պարտապանի գրավ դրված անշարժ գույքի վրա բռնագանձում տարածելու դեպքում գրավառուն իրավունք ունի պահանջելու անշարժ գույքի գրավով ապահովված պարտավորության վաղաժամկետ կատարում: Պարտավորության վաղաժամկետ կատարման մասին պահանջը սահմանված կարգով բավարարվելու դեպքում գրավառուի՝ այդ գույքի արժեքից պահանջը բավարարվում է առաջնահերթ:

2. Եթե պարտապանի գրավ դրված անշարժ գույքի վրա բռնագանձում տարածելու դեպքում գրավառուն չի պահանջում գրավով ապահովված պարտավորության վաղաժամկետ կատարում, ապա գույքի հարկադիր աճուրդից հետո նոր սեփականատիրոջն են անցնում նախկին գրավատուի պարտավորությունները, իսկ անշարժ գույքը համարվում է գրավ դրված գրավառուի մոտ:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-295 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասից հանել «, ինչպես նաև շարժական գույքի գրավի իրավունքի, լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի պետական գրանցման հետ կապված իրավահարաբերությունները» բառերը.

Հոդված 2. Օրենքի 1-ին հոդվածը լրացնել 7-րդ և 8-րդ մասերով հետևյալ բովանդակությամբ.

«7.Շարժական գույքի նկատմամբ գրավի իրավունքի, լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի գրանցման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Շարժական գույքի նկատմամբ իրավունքների գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

8. Շարժական գույքի կադաստրի վարման նպատակով հաշվառման ենթակա շարժական գույքի ցանկը, շարժական գույքի կադաստրի վարման կարգը, հաշվառման մատյանների ձևերը, ինչպես նաև հաշվառում իրականացնող մարմինները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:

Հոդված 3. Օրենքի 6-րդ գլուխը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 4. Օրենքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 13-րդ կետերը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 5. Օրենքի 74-րդ հոդվածի 8-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 6. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում 2015 թվականի հուլիսի 1-ին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի հունիսի 30-ի ՀՕ-68 օրենքի 75^1-րդ հոդվածում «արտահերթ» բառը փոխարինել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 14.1-ին գլխի պահանջներին համապատասխան» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում 2015 թվականի հուլիսի 1-ին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի ապրիլի 9-ի ՀՕ-177-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 138-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությունում «արտահերթ» բառը փոխարինել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 14.1-ին գլխի պահանջներին համապատասխան» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում 2015 թվականի հուլիսի 1-ին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-252 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 17-րդ հոդվածի՝

1) 1-ին մասից հանել «ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների և երրորդ անձանց» բառերը:

2) 4-րդ մասի առաջին նախադասությունում «իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից գրավի իրավունքի գրանցման պահից» բառերը փոխարինել «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14.1-ին գլխով նախատեսված հիմքերով» բառերով:

3) 4-րդ մասի երկրորդ նախադասությունում «գրավի իրավունքի գրանցման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը» բառերը փոխարինել «գրավի իրավունքը գրանցվում է «Շարժական գույքի նկատմամբ իրավունքների գրանցման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով» բառերով:

4) 4-րդ մասի երրորդ նախադասությունը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում 2015 թվականի հուլիսի 1-ին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Ընդերքի մասին Հայաստանի Հանրապետության 2011 թվականի նոյեմբերի 28-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրքի) 28-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Կնքված գրավի պայմանագրից ծագող գրավի իրավունքի գրանցման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են «Շարժական գույքի նկատմամբ իրավունքների գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:»:

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Գրավադրված ընդերքի օգտագործման իրավունքի վրա բռնագանձման տարածումը և իրացումը կատարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 14.1-ին գլխի պահանջներին համապատասխան:»:

Հոդված 2. Օրենսգրքի 29-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենսգրքի 31-րդ հոդվածը 1-ին մասից հանել «գրավ» բառը:

Հոդված 4. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում 2015 թվականի հուլիսի 1-ին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի ապրիլի 29-ի ՀՕ-59-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետից հանել «գրավադրման» բառը:

Հոդված 2. Օրենքի 28-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 28.** Ապրանքային նշանի նկատմամբ իրավունքների գրավադրումը և դրանք արգելանքի տակ դնելը

1. Ապրանքային նշանի նկատմամբ իրավունքներն օրենքով սահմանված կարգով կարող են հանդիսանալ ապահովված իրավունքի առարկա կամ դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կարող է կիրառվել սահմանափակում:

2. Ապրանքային նշանի նկատմամբ ապահովված իրավունքի գրանցման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են «Շարժական գույքի նկատմամբ իրավունքների գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:»:

Հոդված 3. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում 2015 թվականի հուլիսի 1-ին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱՎԻԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի փետրվարի 22-ի ՀՕ-81-Ն օրենքի 1-ին հոդվածը լրացնել նոր 2-րդ մաս հետևյալ բովանդակությամբ՝

«2. Հայաստանի Հանրապետության տարածքում օդանավերի գրավի իրավունքի եւ լիզինգի պայմանագրից ծագող վարձակալության իրավունքի գրանցման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են «Շարժական գույքի նկատմամբ իրավունքների գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:»:

Հոդված 2. Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասից հանել «օդանավը գրավի առարկա հանդիսանալու վերաբերյալ» բառերը:

Հոդված 3. Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում 2015 թվականի հուլիսի 1-ին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-107 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 29.1-րդ հոդվածի՝

1) երկրորդ պարբերության առաջին նախադասությունում «դրվել» բառից հետո լրացնել «կամ սահմանափակում կիրառվել» բառերով:

2) երկրորդ պարբերության երկրորդ նախադասությունում «դնում է» բառերը փոխարինել «կամ սահմանափակումը կիրառում է» բառերով:

3) երկրորդ պարբերության երկրորդ նախադասությունում «30.2 հոդվածով» բառերը փոխարինել «30.2 և 30.3 հոդվածներով» բառերով:

Հոդված 2. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 30.3-րդ հոդվածով.

«**Հոդված 30.3**. Գույքի նկատմամբ սահմանափակում կիրառելը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորության կատարումն ապահովելու նպատակով հարկ վճարողի գույքից հարկ վճարողի այլ պարտատերերի հանդեպ նախապատվության իրավունք ձեռք բերելուն ուղղված հարկային մարմնի կողմից իրականացվող գործողություն է: Սահմանափակումը կիրառվում է հարկ վճարողի շարժական գույքի նկատմամբ (ներառյալ դրամական միջոցները, բանկային հաշիվների տնօրինման իրավունքը)՝ հարկային պարտավորությունների չափով:

Հարկային մարմնի կողմից գույքի սահմանափակումը կարող է կիրառվել միայն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորության կատարումն ապահովելու նպատակով: Սահմանափակումը

կիրառվում է միայն այն շարժական գույքի նկատմամբ, որն անհրաժեշտ է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորության կատարումն ապահովելու համար՝ հարկային պարտավորությունների չափով: Սահմանափակումը կիրառվում է հարկ վճարողի գույքի վրա՝ անկախ այն հանգամանքից, թե ում մոտ է այն գտնվում: Սահմանափակումը չի կարող կիրառվել այն գույքի նկատմամբ, որի վրա օրենքով բռնագանձում չի կարող տարածվել:

Գույքի վրա սահմանափակում կիրառելու մասին հարկային մարմնի ղեկավարը հանձնարարագիր է հրապարակում: Հանձնարարագրում նշվում են հանձնարարագիր հրապարակող պաշտոնատար անձի անունը, ազգանունը, պաշտոնը, հանձնարարագրի տրման տարին, ամիսը, ամսաթիվը, սահմանափակում կիրառող մարմնի անվանումը, գույքի սահմանափակումն իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) պաշտոնը, անունը, ազգանունը, հարկ վճարողի անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը, չկատարված պարտավորության չափը եւ սահմանափակում դնելու իրավական հիմքերը: Սահմանափակում կիրառելու հանձնարարագրի պատճենը երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում է հարկ վճարողին:

Հարկ վճարողի գույքի սահմանափակում իրականացնող պաշտոնատար անձը գույքի վրա սահմանափակում կիրառելու մասին հանձնարարագրի հիման վրա դրա հրապարակումից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, հարկ վճարողի գույքի վրա սահմանափակում կիրառելու մասին ընդունում է որոշում, որտեղ նշվում են որոշումն ընդունելու ամիսը, ամսաթիվը, վայրը, որոշումն ընդունած անձի պաշտոնը, անունը, ազգանունը, քննվող հարցը, չկատարված պարտավորության չափը, ընդունված որոշման հիմքերը այն օրենքների կամ այլ իրավական ակտերի վկայակոչմամբ, որոնցով որոշում ընդունող անձը ղեկավարվել է այն ընդունելիս, քննվող հարցի վերաբերյալ եզրահանգումը և իրականացնում է սահմանափակման ծանուցման գրանցում՝

«Շարժական գույքի նկատմամբ իրավունքների գրանցման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Հարկ վճարողի սահմանափակում կիրառված գույքի հաշվին հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորության հետ կապված և հարկ վճարողի այլ պարտատերերի պահանջների բավարարման հերթականությունը եւ առաջնահերթությունները որոշվում են ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 14.1-ին գլխով սահմանված կարգով:

Գույքի բացակայության կամ հարկ վճարողի գտնվելու վայրն անհայտ լինելու դեպքում սահմանափակում իրականացնող պաշտոնատար անձը կազմում է համապատասխան արձանագրություն: Արձանագրության օրինակելի ձեւը սահմանում է հարկային մարմնի ղեկավարը:

Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորության դադարման, հարկային մարմնի կողմից պարտավորությունը բռնագանձելու վերաբերյալ վարչական ակտն անբողոքարկելի դառնալուց հետո Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն չներկայացնելու դեպքերում գույքի նկատմամբ կիրառված սահմանափակումը համարվում է ուժը կորցրած:

Գույքի նկատմամբ սահմանափակում կիրառելու մասին որոշումը կարող է բողոքարկվել գումարը գանձելու վերաբերյալ որոշումը բողոքարկելու համար սահմանված ժամկետում: Սահմանափակում կիրառելու մասին որոշումը դառնում է անբողոքարկելի հարկ վճարողից գումարը գանձելու վերաբերյալ որոշումն անբողոքարկելի դառնալու հետ միաժամանակ: Գույքի նկատմամբ սահմանափակում կիրառելու մասին որոշման վարչական կարգով բողոքարկումը չի կասեցնում որոշման կատարումը:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հուլիսի 1-ին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 16-րդ հոդվածի 36-րդ կետի ժե[2] ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«ժե[2]) շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքի գրանցում կատարելու համար	բազային տուրքի կրկնապատիկի չափով»:

Հոդված 2. Օրենքի 16-րդ հոդվածի 36-րդ կետի ժե[3] ենթակետը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հուլիսի 1-ին:

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՎԻԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ, «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

«Շարժական գույքի նկատմամբ իրավունքների գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի հաշվառման մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին», «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հարկերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և

լրացումներ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունումը պայմանավորված է ապահովված գործարքների դերի էական բարձրացմամբ՝ վարկային ու ֆինանսական գործարքներ իրականացնելիս: Արդյունավետ ապահովված գործարքների համակարգերը, որոնք ներառում են ժամանակակից իրավական դաշտը և կենտրոնացված համակարգ են, էլեկտրոնային ռեգիստրները, կարևորագույն բաղադրիչ են առողջ ֆինանսական հատվածների և դինամիկ ձեռնարկատիրական միջավայրի: Կիրառված ամբողջ աշխարհում, այս համակարգերը դյուրացնում են այնպիսի շարժական գույքի օգտագործումը, ինչպիսիք են սարքավորումները, գույքացանկերը, դեբիտորական պարտքը, կենդանիները և մշակաբույսերը որպես փոխառության, վարկի գրավի առարկա և այլ ապահովված իրավունքների առարկա: Էմպիրիկ տվյալները ցույց են տալիս, որ այս համակարգերը հատկապես օգտակար են փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) վարկային կարիքների համար, որոնք, որպես կանոն, չունեն անշարժ գույք որպես գրավի առարկա օգտագործելու նպատակով: Որպես այդպիսին, ժամանակակից ապահովված գործարքների համակարգի ստեղծումը հատկապես կարևոր հարց է Հայաստանում, որտեղ փոքր և միջին ձեռնարկությունների ոլորտը աշխատանք է տրամադրում աշխատաշուկայի 42%-ին:

Տվյալ օրենքով կարգավորվում է այն ոլորտը, որն առնչվում է ոչ անշարժ գույքի գրավի և այլ ապահովված իրավունքների հետ, այսինքն գույք, որի նպատակը ֆինանսական պարտավորությունների կատարումն ապահովելն է: Իրավական դաշտը ապահովված գործարքների համար կարևորագույն պայման է հանդիսանում ներդրողների համար նպաստավոր միջավայր ստեղծելու համար: Այն դեպքում, երբ ընկերություններին տրամադրվող ֆինանսավորման գլխավոր աղբյուր է հանդիսանում ոչ թե կառավարությունը, այլ անհատները, բանկերը, ապահովագրական ընկերությունները և այլ մասնավոր ընկերությունները, այդ

ընկերություններն ու անհատները, որոնք այլ անձանց փոխառություն կամ գույք են տրամադրում ապագայում վճարում ստանալու ակնկալիքով, հաճախ դրա դիմաց պահանջում են վարկատուի կամ գնորդի կողմից գործարքի ապահովության երաշխիք: Ներդրողը, որը գիտի, որ պարտապանի չվճարելու դեպքում ունի օրինական իրավունքներ վերջինիս գույքի նկատմամբ, կարող է այլ կերպ գնահատել ներդրման ռիսկը. նշված իրավունքների առկայությունը կարող է ազդել ներդրում կատարելու նրա որոշման վրա և կարող է նաև իջեցնել վարկի տոկոսադրույքը: Նմանատիպ նկատառումները հեշտացնում են նաև լայն սպառման ապրանքներ գնելու համար անհատների վարկի ստացումը:

Հայաստանում նման կարգի անհրաժեշտությունն ակնհայտ է: Մասնավոր գործունեությունը Հայաստանում հիմնականում կազմված է նորաստեղծ փոքր և միջին կազմակերպություններից և որոշակի ծավալով արտաքին ներդրումներից: Ներկայումս հիմնական դժվարություններից մեկը, որ դիմակայում են հայաստանյան փոքր ձեռնարկությունները, դա ֆինանսավորում ստանալու մեծ դժվարությունն է՝ բացառությամբ ոչ պաշտոնական հատվածի միջոցով:

Գոյություն ունեն ապահովված գործարքների բարեփոխումների երկու հիմնական մոտեցումներ: Առաջին և առավել հաճախ օգտագործվող մոտեցումը ներառում է համապարփակ օրենքի ընդունումը, որը կանդրադառնա ապահովված գործարքներին վերաբերող համակարգի յուրաքանչյուր հիմնական տարրին: Երկրորդ մոտեցումը ներառում է գործող օրենքի փոփոխությունը, Հայաստանի դեպքում՝ Քաղաքացիական օրենսգրքի 15-րդ գլուխը: Երկարատև քննարկումներից հետո և հաշվի առնելով այն հանգամանքը, որ շատ առանցքային հասկացություններ արդեն իսկ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված են, որոշվեց, որ ավելի նախընտրելի մոտեցումը կլինի գրավին վերաբերող գործող օրենքի վերանայումը և նոր օրենքի ընդունումը, որը կապահովի ռեգիստրի հետ կապված իրավական կարգավորումը՝ «Շարժական

գույքի նկատմամբ իրավունքների գրանցման մասին» օրենք անվանմամբ (այսուհետ՝ Առաջարկվող իրավական ակտեր): Առաջարկվող իրավական ակտերի ներդնումը կպահանջի նաև զգալի թվով օժանդակ իրավական ակտերի վերանայում, որպեսզի ապահովի նոր դրույթների ներդաշնակ կիրառումը:

Այսպիսով, Առաջարկվող իրավական ակտերը նախատեսում են ստեղծել ժամանակակից ապահովված գործարքների համակարգ Հայաստանում, հետևյալ հատկանիշներով՝

1) **Կարգավորման շրջանակ**. ընդլայնել ընթացիկ կարգավորման շրջանակի ծավալները՝ ներառելով ցանկացած շարժական գույքի տեսակ (նյութական և ոչ նյութական, ներկա և ապագայում ձեռք բերվող, ինչպես նաև տատանվող արժեքով ակտիվներ), ինչպես նաև ցանկացած տեսակի պարտավորությունները և շահերը, որոնք ապահովում են պարտապանի մեկ կամ մի քանի պարտավորությունների կատարումը: «Անակնկալ շահերից» խուսափելու համար, համակարգում ներառվել են մի շարք շահերի տեսակներ ձևակերպման և նախապատվության սահմանման նպատակով: Նշված շահերը ներառում են ֆինանսական վարձակալության որոշ տեսակներ, դեբիտորական պարտքը, դատարանի և վարչական մարմնի պարտապանի գույքի վրա կալանք դնելու իրավունքը:

2) **Ստեղծում.** արդյունավետ ապահովված գործարքների համակարգը կնախատեսի պարզ ընթացակարգեր ապահովված շահի ստեղծման համար՝ փոխանցումների համար նախատեսված վճարը պահելով ցածր և խթանելով կիրառումը: Առաջարկվող փոփոխությունները Քաղաքացիական օրենսգրքում կնվազեցնեն ձևակերպման հետ կապված բարդեցումները, ինչպես նաև առաջարկվող էլեկտրոնային ռեգիստրի ստեղծումը կնվազեցնի ձևակերպումների հետ կապված ծախսերը:

3) **Ձևակերպում.** Քաղաքացիական օրենսգրքի դրույթների ընդլայնում է նախատեսվել ձևակերպման մեկ մեթոդ՝ գրանցում: Փոփոխություններով

նախատեսվել է ստեղծել նոր կենտրոնացված, էլեկտրոնային ռեգիստրը, որը կընդունի «ծանուցումները» ապահովված շահի և պարտապանի գույքի վրա կալանք դնելու իրավունքի վերաբերյալ:

4) **Նախապատվություն.** Հստակեցվել են նախապատվության պահանջների կանոնները՝ հիմնելով «առաջին գրանցողը, առաջինն է իրավունքում» սկզբունքի վրա, որը տալիս է նախապատվություն առաջին պարտատիրոջը, ով ձևակերպում է իր շահը գրանցմամբ: Առաջարկվող բարեփոխումները նաև կնախատեսեն բացառություններ հիմնական կանոնի նկատմամբ, որպեսզի պաշտպանեն պարտատիրոջը և դյուրացնեն վարկը:

4) **Կիրառում.** Ամրացվել են այն դրույթները, որոնք սահմանում են ոչ դատական կարգով գույքի հարկադիր առգրավումն և օտարման ընթացքի արագացումը և հստակեցվել այն կանոնները, որոնք վերաբերում են գույքի բաշխմանն ու պարտապանի գույքային իրավունքներին:

Միաժամանակ, ներդրվող ինստիտուտի արդյունավետ գործարկման համար անհրաժեշտ է կատարել նաև լրացում Հայաստանի Հանրապետության քրեական օրենքով փոփոխություններ ՀՀ քրեական օրենսգրքում, որի նպատակն է պարտատիրոջը վնաս պատճառելու նպատակով պարտապանի կողմից ապահովված իրավունքի առարկա գույքի նկատմամբ դիտավորությամբ կատարված գործողությունների կատարման կանխարգելումը, որը նույնպես կրում է կարևորագույն նշանակություն և որի նպատակով էլ սույն նախագծով ներկայացվել են համապատասխան փոփոխությունները նաև ՀՀ քրեական օրենսգրքում:

<u>Ընթացիկ իրավիճակը և խնդիրները</u>

«Շարժական գույքի նկատմամբ իրավունքների գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի հաշվառման մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին», «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հարկերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված ոլորտի առկայիս կարգավորումները կամ թերի են կամ ընդհանրապես բացակայում են: Հայաստանը նախկինում ձեռնարկել է ապահովված գործարքների ոլորտին վերաբերող բարեփոխումներ, սակայն ոչ միանշանակ արդյունքներով: Վերջին տասնամյակի ընթացքում բազմաթիվ էական փոփոխություններ են իրականացվել Քաղաքացիական օրենսգրքի 15-րդ գլխում, որոնք վերաբերում էին գրավին. մինչդեռ որոշ հիմնական

հասկացություններ ներկայիս օրենսգրքում մասնատված են և թերի, և չեն համապատասխանում միջազգային լավագույն փորձին: Որպես արդյունք, ներկայիս իրավական դաշտը չի ապահովում վարկատուների վստահությունը և կանխատեսելիությունը, որոնք հարկավոր են ՓՄՁ-ներին տրամադրվող վարկերի մեծացմանն ու խրախուսմանը:

Տնտեսական խնդիրներից մեկը, որը նաև բարձրացնում են բանկերի և ձեռնարկությունների իրավաբաններն դա այն է, որ ընթացիկ իրավական համակարգը չի տրամադրում վստահելի կենտրոնացված ռեգիստրի համակարգ գրավի և այլ ապահովված իրավունք գրանցելու համար: Արդյունքում պարզ է դառնում, որ հայաստանյան ներդրողները ավելի քիչ են հակված գրավով ապահովված վարկեր տրամադրելուն: Բացի այդ, շարժական գույքի կենտրոնացված ռեգիստրի բացակայությունը վարկատուին մեծ դժվարությունների առաջ է կանգնեցնում որոշելու, թե որևէ մեկն առաջնային իրավունք չունի արդյոք գրավի առարկա հանդիսացող գույքի նկատմամբ:

Պարտավորությունների կատարման ապահովման (գրավին վերաբերող) հիմնական դրույթները գտնվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 15-րդ գլխում՝ Գրավի իրավունք (հոդվածներ 226-259), սակայն շարժական գույքի հանդեպ պարտավորությունների կատարման վերաբերյալ հավելյալ դրույթները ցրված են օրենսդրական դաշտում: Միաժամանակ, շարժական գույքի հատկանշական տեսակների, ինչպիսիք են արժեթղթերը, մտավոր սեփականությունը, ինքնաթիռները և շարժական գույքի այլ տեսակները և դրանց վերաբերող գրավի հետ կապված դրույթները կարելի է գտնել տարբեր օրենքներում: Կան ավելին քան 30 իրավական ակտեր, որոնք կարգավորում են ապահովված շահի ստեղծման կանոնները: Արդյունքում Հայաստանի ապահովված գործարքները կարգավորող ներկայիս իրավական կառուցվածքը մասնատված է, թերի և անարդյունավետ:

Հայաստանի ինստիտուցիոնալ կառուցվածքը ևս համարժեքորեն մասնատված է և անարդյունավետ՝ ապահովված գործարքների ոլորտում: Շարժական գույքի գրանցումը, որը սահմանափակ է, կարգավորվում է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով, ըստ որի իրավունքները գրանցվում են ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից: Միաժամանակ, կան նաև այլ յոթ ռեգիստրեր, որոնց նպատակն է գրանցել այլ հատուկ տեսակների գույքային իրավունքները: Այս ռեգիստրներից յուրաքանչյուրը գործում է իր անձնական կարգի համաձայն, շատ դեպքերում առանց հանրային մատչելության և թափանցիկության: Նշված նախագիծը պատրաստվել է նպատակ ունենալով շտկելու նշված թերությունները:

Նախագծով ներկայացվել են նաև ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ: Վերջինիս կարևորությունը պայմանավորված է հետևյալով.

Ապահովված իրավունքի առարկան պարտապանի կողմից դիտավորությամբ վնասելը, որը նպատակ է հետապնդել խոշոր կամ առանձնապես խոշոր չափերի վնաս պատճառել պարտատիրոջը, նախատեսված չէ որպես քրեորեն հետապնդելի արարք:

Առավել տարածված բնույթ են սկսում կրել այն դեպքերը, երբ պարտապանները չկարողանալով կատարել իրենց պարտավորությունները միաժամանակ ցանկանում են նաև խուսափել ապահովված իրավունքի առարկայի միջոցով այդ պարտավորությունները կատարելուց:

Դրա համար նրանք ապահովված իրավունքի առարկան մասնատում կամ ոչնչացնում կամ վնասում կամ վատնում կամ թաքցնում՝ արդյունքում հանգեցնելով նրան, որ պարտատերը ապահովված իրավունքի առարկայից բավարարում չի ստանում:

Պարտապանի այսպիսի չարամիտ ու հակահիրավական գործողությունների հանրային վտանգավորությունը հատկապես մեծանում է այնքանով, որքանով որ

դրանց արդյունքում էական վնասներ են կրում նաև վարկ տրամադրող ֆինանսական կազմակերպությունները, որոնք չեն կարողանում վերադարձնել տրամադրված գումարները: Սա ֆինանսական համակարգի կայունության համար իրական ու էական վտանգներ է պարունակում:

Պարտապանի չարամիտ գործողությունները վնասում են ոչ միայն ֆինանսական կազմակերպության, այլ նաև այն բազմաթիվ քաղաքացիների շահերը ովքեր իրենց գումարները հանձնել են բանկի կառավարմանը:

<u>Կարգավորման նպատակը և ակնկալվող արդյունքը</u>

«Շարժական գույքի նկատմամբ իրավունքների գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի հաշվառման մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին», «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին»,

«Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հարկերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունմամբ կիստակեցվի օրենքներով նախատեսված գործողության ոլորտը:

Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ սպասարկման գրասենյակների ստեղծումը պետության համար կառաջացնի լրացուցիչ ֆինանսական բեռ, ուստի՝ հաշվի առնելով այն, սույն օրենքով նախատեսված կարգով սպասարկման գրասենյակի գործառույթներ կարող են իրականացնել նոտարները՝ որպես հասարակությանը հասանելի հանրային ցանց, ինչպես նաև այն, որ «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ նոտարը վավերացնում է այն բոլոր փաստաթղթերի վրա եղած ֆիզիկական անձանց ստորագրությունների իսկությունը, որոնք չունեն գործարքի բնույթ:

Ապահովված գործարքների ժամանակակից ռեժիմի ընդունումը կարող է նշանակալից, դրական ազդեցություն ունենալ վարկի հասանելիության, հատկապես ՓՄՁ-ների նկատմամբ:

Գույքի անհամապատասխանության հասցեները. Սովորական վարկատուների մեծամասնությունը չի ցանկանում վարկ տրամադրել որևէ տեսակի գրավի բացակայության դեպքում: Անշարժ գույքը գրավի ամենացանկալի տեսակն է, որը խնդրահարույց է փոքր և միջին ձեռնարկությունների համար, որոնց ակտիվները սովորաբար կազմում են տրանսպորտային միջոցներ, մեխանիկական սարքեր (մեքենաներ), սարքավորումներ և դեբիտորական պարտքեր: Արդյունքում առաջանում է լուրջ անհամապատասխանություն այն ակտիվների միջև, որոնք պետք է ընդունվեն

բանկի կողմից որպես գրավ և այդպիսի ՓՄՁ-ների ակտիվների միջև: Հետևաբար ՓՄՁ-ին հաճախ կամ ընդհանրապես մերժում են վարկը, կամ չեն կարողանում պարտք վերցնել, ինչը պայմանավորված է ներդրումների բարձր գներով:

Փոխառության ռիսկի նվազեցումը և ցածր գնի պահպանումը. Ժամանակակից ապահովված գործարքների կառուցվածքները նպաստում են շարժական ակտիվների օգտագործմանը, ներառյալ սարքավորումները, ներդրումները, տնային կենդանիները և բերքը, ինչը հավելում կլինի փոխառության և վարկի համար, ինչն էլ թույլ է տալիս ձեռնարկություններին օգուտ քաղել իրենց ակտիվներին բնորոշ ամբողջ արժեքով՝ վարկը ապահովելու համար: Արդյունավետ և օգտակար ռեժիմների բացակայության դեպքում վարկը ավելի ռիսկային է և բանկերն և այլ պարտատերերը պատասխանում են վարկ տրամադրելիս վարկի արժեքը փոքրիշատե բարձրացնելով՝ ռիսկերը ծածկելու նպատակով:

Փոխառության հաստատման և վարկի ծավալի աճը. Պրակտիկորեն, ժամանակակից ապահովված գործարքների ռեժիմը ապացուցել է իր արդյունավետությունը թե փոխառության հաստատման հնարավորության և թե վարկի լայնածավալ քանակի աճի նկատմամբ: Արդյունաբերական երկրներում ապահովված պարտապանները ստանում են մոտ 9 անգամ ավել վարկով նախատեսված գումար ի համեմատ այն պարտատերերի, որոնք նույն վարկը ստանում են առանց հավելյալ ապահովման: Այս ռեժիմները ևս նվազեցնում են փոխառության երաշխավորության ժամանակը և արժեքը, որը կարող է առաջնորդել դեպի ավելի լավ փոխառության պայմանների և բարելավված վարկի մատչելիության:

Բարելավվում է փոխառության պայմանները. Արդյունավետ ապահովված գործարքների ռեժիմ ունեցող երկրներում պարտապանները նաև շահում են երկարատև վճարման շրջանից, որը 11 անգամ ավելի երկար է և

նշանակալիորեն ավելի ցածր տոկոսադրույքով: Արդյունավետ ապահովված գործարքների ռեժիմը ծառայում է նաև վարկի՝ գրավի ապահովման արժեքի բարելավման համար և մեծացնելու գրավի և այլ ապահովված իրավունքի կիրառման հնարավորությունը: Բարելավված վարկատուի պաշտպանությունը ինչպես օրինակ արդյունավետ հարկադիր մեխանիզմներն են, նպաստում են փոխառության վճարման ավելի երկարատև ժամկետի նախատեսմանը և ավելի ցածր տոկոսադրույքերին: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վարկատուի ավելի թույլ պաշտպանությամբ իրավական դաշտերը խոչընդոտում են ավելի մեծ ծավալով վարկերի տրամադրմանը:

Որպես առանձին, սակայն կարևոր հանգամանք, առաջարկվող իրավական ակտերը Համաշխարհային բանկի «Doing Business»-ի չափանիշների նկատմամբ կունենան հստակ և դրական ազդեցություն: Համաձայն «Doing Business» 2013թ. զեկույցի՝ Հայաստանը վարկային ցուցանիշներից հավաքել է 10-ից միայն 6-ը: Հայաստանի հավաքած 6 միավորը համեմատական կարգով ցածր է օրինակ Վրաստանի (9),Մոլդովայի (8) և Ուկրաինայի (9) հետ:

Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունմամբ հնարավորինս կկանխվեն ապահովված իրավունքի առարկայի նկատմամբ դիտավորությամբ իրականացվող արարքները, որի հետևանքով կպաշտպանվեն հանրության, ֆինանսական կազմակերպությունների, այնպես էլ մյուս պարտատերերի շահերը:

Սույն օրենքների ընդունման կապակցությամբ անհրաժեշտ է ընդունել հետևյալ իրավական ակտերը.

1) «Հայաստանի Հանրապետության կառավարության 1996 թվականի հոկտեմբերի 31-ի N 351 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում.

2) «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. նոյեմբերի 18-ի թիվ 1538-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում.

3) «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 272-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի որոշում.

4) «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2004թ. դեկտեմբերի 08-ի թիվ 192-Ն հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետությունում օդանավերի պետական գրանցման, օդանավերի ռեգիստրի վարման ու թռիչքային պիտանիության սերտիֆիկատների տրման և օտարերկրյա թռիչքային պիտանիության սերտիֆիկատների ճանաչման կարգում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի հրաման.

5) Ճանաչել ուժը կորցրած Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 29-ի 1678-Ն որոշումը.

6) Ճանաչել ուժը կորցրած Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 30-ի 1948-Ն որոշումը:

Սույն իրավական ակտերը ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և վերջիններիս գործողությունը տարածվում է 2015 թվականի հուլիսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՏԵՂԵԿԱՆՔ N 1

«ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՎԻԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ, «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Շարժական գույքի նկատմամբ իրավունքների գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի հաշվառման մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին», «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հարկերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՏԵՂԵԿԱՆՔ N 2

«ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՎԻԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Շարժական գույքի նկատմամբ իրավունքների գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի հաշվառման մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին», «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հարկերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունման կապակցությամբ նախատեսվում է պետական մարմնի բյուջեում եկամուտների էական ավելացում, քանի որ նախագծով նախատեսվում է գրանցման համար պետական տուրքի վճարում և այլ լրացուցիչ վճարներ: Միևնույն ժամանակ հնարավոր չէ եկամուտի գծով ներկայացնել հստակ հաշվարկ, քանի որ այն պայմանավորված է տարեկան գրանցումների քանակից, ինչը կանխատեսումը հնարավոր չէ:

Ցուցանիշներ	ընթացիկ 2014 տարի		Հաջորդող 3 տարիները		
			2015	**2016**	**2017**
	Ըստ 2014թ. պետական բյուջեի	Փոփոխությունը 2014թ. պետական բյուջեի համեմատ	Փոփոխությունն ընթացիկ տարվա համեմատ (n)	Փոփոխությունն ընթացիկ տարվա համեմատ (n)	Փոփոխությունն ընթացիկ տարվա համեմատ (n)
1	2	3	4	5	6
1.Եկամուտներ	0	0	0	0	0
1.1. պետական բյուջեի եկամուտներ					

1.2. ՏԻՄ եկամուտներ					
2. Ծախսեր	0	0	0	0	0
2.1. պետական բյուջեի ծախսեր	0				
2.2. ՏԻՄ բյուջեի ծախսեր					
3. Ֆիսկալ ազդեցության գնահատական	0	0	0	0	0
3.1. պետական բյուջե	0	0	0	0	
3.3. ՏԻՄ բյուջե					
4. Եկամուտների և ծախսերի հաշվարկների մանրամասն ներկայացում (անհրաժեշտության դեպքում կարող է ներկայացվել հավելվածի					

տեսքով):	
4.1. Եկամուտների գնահատում	
4.2. Ծախսերի գնահատում	
5. Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)	